

ԽՈՒՄԱՆ ԳՈՅԹԻՍՈՒԼՈՆ ԵՎ ԻՍՊԱՆԱԿԱՆ
«ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԵՊԸ»

XX դարի իսպանական գրականությունը, առավել քան եվրոպական որևէ այլ երկրի գրականություն, սերտորեն կապված է Իսպանիայի պատմության հետ: Այս դարաշրջանի Իսպանիայի պատմությունը ներկայացնում է որպես արյունալի իրադարձությունների՝ հեղափոխությունների, հեղաշրջումների, քաղաքացիական պատերազմների մի անվերջ շղթա:

1936-1939 թվականների արյունալի քաղաքացիական պատերազմից հետո իրեն երկրի ղեկավար հռչակած Ֆրանկոն, իր ստեղծած բռնապետական ռեժիմը պահպանելու նպատակով հենվում էր բանակի, կաթոլիկ եկեղեցու և Ֆալանգայի վրա: Ինչպես ցանկացած բռնապետական երկրում, Իսպանիայում ևս այս տասնամյակներին ճնշվում էր ազատ խոսքը, մամուլը, իսկ բռնապետության ընդդիմախոսները հայտնվում էին բանտերում, հետո՝ «ամհետանում» կամ զնդակահարվում: Սա էր պատճառը, որ ազատամիտ և առաջադեմ հայացքների տեր մտավորականներից շատերը, այդ թվում նաև գրողները, ստիպված էին արտագաղթել իրենց հայրենիքից:

Դեռևս XX դարի սկզբից Իսպանիան ներսից բզկտում էին նաև ազգայնական:

Իսպանացի մեծանուն գրող Խուան Գոյթիսոլի ծնունդը համընկավ իսպանական պատմության մեջ կարևորագույն իրադարձություններից մեկի հետ, երբ բռնապետ Պրիմո դե Ռիվերայի վարած սոցիալական քաղաքականությունից դժգոհ ժողովրդական զանգվածների հեղափոխական գործունեության արդյունքում բռնապետությունը տապալվեց, իսկ բռնապետը, իր համախոհ Ալֆոնս XIII հետ մեկտեղ փախավ Ֆրանսիա:

1936-1939 թվականների քաղաքացիական պատերազմը և դրան հաջորդած տարիները, որոնք նշանավորվեցին պատերազմում հաղթած ֆրանկիստների կողմից հանրապետականների հետապնդումներով ու զանգվածային զնդակահարություններով, անկասկած, ոչ միայն XX դարի, այլև Իսպանիայի պատմության ողջ ընթացքի առավել «սև» էջերից է, որի վերաբերյալ հարյուրավոր վեպեր, հոդվածներ ու էսսեներ են գրվել ոչ միայն իսպանացի, այլև օտարերկրացի գրողների ու պատմաբանների կողմից: «Պատերազմական վեպը», «սոցիալական վեպի» հետ մեկտեղ, առավել կարևոր տեղ է զբաղեցնում հատկապես իսպանացի գրողների «դարամիջյան սերնդի» ներկայացուցիչների ստեղծագործություններում, որոնցից մեկն էր Խուան Գոյթիսոլը: Իր

«Իսպանիան ու իսպանացիները» (1979) ժողովածուի «Կայենն ու Աբելը 1936-1939 թվականներին» հոդվածում Գոյթիսոլոն գրում է. «1936-1939 թվականների իսպանական քաղաքացիական պատերազմը՝ անվիճելիորեն մեր դարի ամենահիշարժան իրադարձություններից մեկն է»:¹

Քաղաքական պատերազմի մասին իսպանացի արձակագիրները սկսեցին գրել դեռ բուն պատերազմի տարիներին: Այս թեմային էր նվիրված մասնավորապես Ռոման Սենդերի «Հակագրոհ» (1937-1938) և Արթուր Բարեայի «Խիզախություն և վախ» (1939) վեպերը: Պատերազմին են անդրադարձել նաև ֆրանկիստական ռեժիմի կողմնակից արձակագիրները: Օրինակ, Ա.Բենիտես դե Կաստրոն «Գրավված է վեցերորդ կիլոմետրը» (1939) և Ռ.Գարսիա Սերանոն «Եռլսենիո, կամ գարնան հռչակում» (1938) վեպերում:

1936-1939 թվերի արյունալի պատերազմի մասին գրել են նաև Իսպանիայից արտագաղթած գրողները: Առավել հայտնի են Ս.Աուբայի «Մոզական լաբիրինթոս» (1943-1968) բազմահատորյա ժողովածուն, Ա.Բարեայի «Այդպես կոփվեց խռովարարը» (1951) եռագրությունը, Սեսար Արկոնադայի «Տախտ գետը» (1938):

1936-1939 թվականների քաղաքացիական պատերազմի մասին առավել օբեկտիվ պատկերացում են տալիս Խոսե Մարիա Յիրոնելայի ստեղծագործությունները, որոնց հեղինակը, իր իսկ խոսքերով, իր առջև խնդիր էր դրել հակադրվել նույն պատերազմին անդրադարձած եվրոպայի գրողներին:²

Յիրոնելայի հայտնի գործերից են «Նոճիները հավատում են Աստծուն» (1952) և «Միլիոն սպանվածներ» (1961) վեպերը: Երկրորդը ամբողջապես նվիրված է քաղաքացիական պատերազմին:

Յիրոնելայի «Միլիոն սպանվածները» անսովոր էր 60-ականների իսպանական վեպի համար, քանի որ այստեղ պատերազմի մասին պատմողը ամեն կերպ ձգտում էր լինել անկողմնակալ: Ըստ Յիրոնելայի, իր այս վեպի հիմքում ընկած է Լ.Տոլստոյի «Բարոյախոսությունը»:

Վեպի ընծայմանը նպաստեց այն, որ 60-ականների սկզբներից Ֆրանկոյի բռնապետական ռեժիմը՝ ներքին ու արտաքին ճնշման տակ, զգալիորեն թուլացրել էին ճնշումը այլախոհների հանդեպ: Այս ժամանակաշրջանից սկսած պաշտոնական քարոզչամիջոցները գործածության մեջ դրեցին նոր գաղափարախոսություն, որը ֆրանկիստների կողմից ստացավ «Նահատակների հովտի փիլիսոփայություն» անվանումը: Նահատակների հովիտը՝ եղբայրական գերեզմանատուն է, որտեղ կողք-կողքի հանգչում էին քաղաքացիական պատե-

¹ Juan Goytisolo, España y los Españoles, Barcelona, 1979, p.408

² Gironella J.M. Así escribo "Un millón de muertos" – Gironella J.M. Todos somos Fugitivos, Barcelona, 1961, p.338

րազմի գոհերը՝ ֆրանկիստներն ու հանրապետականները: Ըստ իշխանությունների մտահաղացման գերեզմանատունը պետք է դառնա նախկին հակամարտող կողմերի հաշտության խորհրդանիշը:

1960-70-ականների լույս ընծայած «Յուլիսի 19-ը» (1966) և «Քաղաքական պատերազմ» (1972) վեպերում առաջադեմ գրող Իգնասիո Ագուստին մերկացնում է ֆրանկիստների իրական դեմքը, ցույց տալով, որ «Նահատակների Յոկոտի փիլիսոփայությունը» ընդամենը խաբեություն է ու աչքակապություն: Մինչ ֆրանկիստների աջակցությունը վայելող կեղծ պատմաբանները փորձում էին ամեն կերպ նենգափոխել 1936-1939 թվականներին կատարված, հավասարության նշան դնել հաղթած ֆրանկիստների ու հանրապետականների միջև, հրապարակախոս Մանուել Տունյոնը իր «XX դարի Իսպանիան» հոդվածում՝ հենվելով ֆրանսիացի մեծամուն գրող Սենտ-Էլզյուպերիի վկայությունների վրա, կատարվածի ողջ պատասխանատվությունը դնում է ֆրանկիստների վրա, նրանց մեղադրելով ռազմաճակատում թափված աննշտ մարդկանց արյան մեջ, ինչպես նաև թիկունքում գործած ոճրագործությունների համար:³

1970-ականների սկզբներից գնալով նվազեց քաղաքացիական պատերազմի մասին գրվող ստեղծագործությունների թիվը: Արձակագիրների վեպերում, վիպակներում ու պատմվածքներում այս թեման սկսեց էպիգոդիկ բնույթ կրել: Այն առավել հաճախ արթնանում էր հերոսների հուշերում և ընկալվում միմիայն որպես անցյալ: Իսպանացի գրողներից քչերն էին, որ այս ժամանակաշրջանում ներկան ուղղակիորեն կապում ու պայմանավորում էին անցյալով: Այդ քչերից էին Խուան Բենետը, Կարլոս Ռոխասն ու Խուան Գոյթիսոլոն:

Խուան Գոյթիսոլոն ծնվել է 1931 թվականին, Բարսելոնայում: Ավարտել է Բարսելոնայի ու Մադրիդի համալսարանների իրավագիտական ֆակուլտետները: 1954 թվականին Գոյթիսոլոն հրապարակեց իր առաջին «Ձեռքերի ճարպկություն» վեպը, որը ճանաչում բերեց գրողին, նրան դարձնելով «դարամիջյան սերնդի» իսպանացի գրողների առաջատարը:

Մանուկ հասակում, քաղաքացիական պատերազմի տարիներին, Խուան Գոյթիսոլոն կորցրեց իր մորը, որը զոհ դարձավ Բարսելոնայի հերթական օդային ռմբակոցությանը: Այս ողբերգությունը խորապես ցնցեց ապագա գրողին, ինչի մասին նա գրում ու հիշում է հետագայում: Իր ստեղծագործություններում, էսսեներում ու հոդվածներում Խուան Գոյթիսոլոն պարբերաբար անդրադառնում է քաղաքացիական պատերազմին: «Կոմս դոն Խուլիանի վրեժը» (1970) վեպում Գոյթիսոլոն Իսպանիան ներկայացնում է որպես մի «մռայլ» թերակղզի, որի բնակիչները հայտնվել են «լեթարգիկ» քնի մեջ,⁴ և կամ Իսպանիան

³ Гарсия Хосе. Испания XX века, Москва, 1967, стр. 224

⁴ Juan Goytisolo. Reivindicacion del conde don Julian, Barcelona, 1970, p.14

համեմատում է հին հունական դիցաբանությունից հայտնի ստորգետնյա «մեռյալների աշխարհի» հետ, որտեղից դուրս գալու ելք չկա: (24, 48)

Վեպի հերոս դոն Խուլիանը միաժամանակ ապրում է VII և XX դարերում: Այս կերպ Գոյթիսոլոն խտացնում, միավորում է անցած դարերը, իսպանական պատմությունը դիտարկելով մեկ ընդհանուր հարթության վրա: Այն թույլ է տալիս գրողին ցույց տալ, որ Իսպանիայի պատմությանը բնորոշ է անվերջ ցիկլային կրկնությունները, որոնց ընթացքում, սակայն, անփոփոխ են մնում իսպանացու արատավոր բարքերն ու մտածողությունը:

«Մերը, մերը, մերը ... » ամենուր Իսպանիայում լսվում են այս խոսքերը, գրում է Գոյթիսոլոն և նշում, որ Իսպանական իսպանացու շուրթերում այս «մերը» արտահայտությունը տիեզերական իմաստ է ձեռք բերում:

Ըստ Գոյթիսոլոյի, 1936-1939 թվականների քաղաքացիական պատերազմը իսպանական պատմության կրկնվող արատավոր ցիկլներից մեկն է: Սա է պատճառը, որ գրողը խուսափում է այս կոնկրետ փուլի մեկնաբանությունից. «Պատերազմի տարբեր՝ քաղաքական, սոցիալական, ռազմական, տնտեսական ու դիվանագիտական առանձնահատկությունների ամբողջական վերլուծությունը չափից դուրս բարդ է <...> Եվ ես կասեմ անապակվեմ նրանով, որ խնդրին կանոնադաշնամ զուտ իսպանական տեսանկյունից, ինչը բռնության հարցն է»: (15, 415)

«Կայենն ու Աբելը 1936-1939 թվականներին» հոդվածում հիշատակվող «կայունությունը» պետք է դիտել որպես հեգմանք, քանի որ այն բացահայտվում է իսպանական «ոգուն» բնորոշ դաժանությունների ու պարբերաբար կրկնվող եղբայրասպան պատերազմների մեջ: Պատերազմի ու դրա ուղեկից բռնությունների թեման իր առավել ընգրկուն արտացոլումն են ստանում Խուան Գոյթիսոլոյի «Թախիծ դրախտում» վեպում (1955):

Իր «Մտավորականն ու իր գործունեությունը (գրառումներ որոշակի պատմական իրավիճակի՝ իսպանական քաղաքացիական պատերազմի առթիվ)» (1967) հոդվածում, իսպանացի արձակագիր Խոսե Կամիլո Սելան մասնավորապես գրում է. «Իսպանացի մտավորականը՝ ահա թե ով պարտություն կրեց քաղաքացիական պատերազմում, իսկ միգրացե և իսպանական ողջ պատմության ընթացքում»:⁵

Ի տարբերություն Սելայի, Գոյթիսոլոյին բացարձակապես չի հետաքրքրում, թե ով հաղթեց կամ ով պարտվեց այս եղբայրասպան պատերազմում, նրա համար կարևորը այն է, որ պատերազմից առավել շատ տուժվեցին երեխաները՝ ինքն ու իր սերնդակիցները, որոնք այդպես էլ չճաշակեցին

⁵ Cela C.J. El intelectual y la accion, Papeles de San Armadas, 1967, p.6

մանկության բերկրանքը: Սա է «Թախիծ դրախտում» պատերազմական վեպի գլխավոր թեման, ինչին համապատասխան էլ գրողը որպես վեպի գլխավոր հերոս է ընտրել 12-ամյա Աբել Սորանոյին»: Պատահական չէ, որ հեղինակը հերոսին անվանել է Աբել. ինչպես իր հողվածում, այնպես էլ վեպում, Գոյթիսոլոն արդիականացնում ու նույնացնում է աստվածաշնչյան Կայենի ու Աբելի պատմությունը, այն համեմատելով իսպանական քաղաքացիական պատերազմի հետ: Պատահական չէ նաև այն, որ Գոյթիսոլոյի հերոսը զոհվում է հենց վեպի սկզբում:

«Թախիծ դրախտում» վեպում գործողությունները ընթանում են զուգահեռաբար սյուժետային երկու հարթություններում, որոնցից մեկը պատերազմն է, երկրորդը՝ դրա հետևանքները: Ընդ որում հեղինակի համար այստեղ գլխավորը հետևաքննությունն է: Վեպի գործողությունները տեղի են ունենում Իսպանիայի սահմանամերձ շրջաններից մեկում, փոքրիկ ավանում, որտեղ տեղակայված մանկատանը իրենց հանգրվանն են գտել 8-ից 12 տարեկան միակողմանի ու երկկողմանի ծնողազուրկ երեխաները: Սանկատնից ոչ հեռու, «Դրախտ» կոչվող կալվածքում է ապրում Աբել Սորանոն, որն այստեղ տատիկի քրոջ տուն է եկել ծնողների մահից հետո:

Պատմելով Աբելի մասին, Գոյթիսոլոն մասնակիորեն վերականգնում է իր մանկությունը: 1937 թվականին իշխանությունները ձերբակալեցին գրողի հորը, և երբ նա դուրս եկավ բանտից, ընտանիքը Բարսելոնայից տեղափոխվեց մոտակա Վիլադորաու քաղաքը, որը մանուկ հուսանի հիշողության մեջ մնաց որպես դրախտ: «Ինձ թվում էր, - գրում է Գոյթիսոլոն իր հուշերում, - որ քաղաքացիական պատերազմն ու դժբախտությունները տեղի են ունենում հեռվում և կապ չունեն մեր հետ»:⁶ Ավելի ուշ, սակայն, Գոյթիսոլոն հասկացավ, որ իրականության նման ընկալումը թվացյալ էր: Մինչ ընտանիքը ապրում էր Վիլադորաուում, գրողի մայրը՝ շաբաթը մեկ, զնացքով մեկնում էր Բարսելոնա, ծնողներին այցի: Նման ուղևորություններից մեկն էլ ճակատագրական դարձավ կնոջ համար: «38 թվականի մարտի տասնվեցին առավոտյան մայրս սովորության համաձայն, մեկնեց Բարսելոնա, - գրում է Գոյթիսոլոն: <...> ես լավ եմ հիշում, թե ինչպես նայեցի պատուհանից ու տեսա, որ նա՝ կինը, որին ես շուտով տեսք է անվանելի «անծանոթուհի», վերարկույով, գլխարկով, պայուսակը ձեռքին գնում է այնտեղ, որտեղ չենք լինի ոչ մենք և ոչ էլ ինքը՝ դեպի խավար, դեպի դատարկություն, դեպի ոչ մի տեղ»։ (89-90)

«Թախիծ դրախտում» վեպի հերոսուհի Դորայի կերպարի համար որպես նախատիպ է հանդիսացել հենց գրողի մայրը: Վեպի սյուժեում, որոշակի առու-

⁶ Juan Goytisolo, Coto vedado, Barcelona, 1985, p.72-73

մով, վերականգնվում, վերախաղարկվում է Գոյթիսոլոյի մոր մահվան պատմությունը: Մանկատան դաստիարակչուհի, գեղեցկուհի Դորան սիրում է համրապետական թևի զինվոր Մարտին Էլոսեգիին, նրանից երեխա է սպասում ու երագում է այն օրվան, երբ պատերազմը կավարտվի ու իրենք կկարողանան ամուսնանալ, ընտանիք կազմել: Սակայն հերթական անգամ բժշկին այցելության քաղաք գնալիս, Դորան դառնում է օդային ռմբակոծության զոհը:⁷

Դեռ իր առաջին՝ «Ձեռքերի ճարպկություն» վեպում, Գոյթիսոլոն ակնարկում է այն մասին, որ կարճամիտ ու դաժան մեծահասակների գործողություններից առավել հաճախ տուժում են երեխաները: Վեպի հերոսներից մեկը՝ եղուարդո Ուռիբեն, անդրադառնում է հաչակրած արշավանքներին, որոնցից մեկի ժամանակ, հասնելով Միջերկրական ծովի ափին, քրիստոնեաները ստիպված կանգ են առնում, քանի որ ծովն անցնելու համար նավեր չունենին: Այդ ժամանակ արշավանքի կազմակերպիչները հրամայում են որպեսզի առաջինը ջուրը մտնեն իրենց ուղեկից «ամմեղները»՝ երեխաները:

Հեգնելով հաչակիրներին, Գոյթիսոլոն հուշում է, թե նրանք փորձում էին անել այն, ինչը Ֆրեց աստվածաշնչյան Մովսեսը, Տիրոջ օգնությամբ՝ այն դրվագում, երբ իսրաելցիները հասան Կարմիր ծովի ափին: «Մովսեսը ձեռքը մեկնեց ծովի վրա, - գրված է Հին Կտակարանում, - <...> և ծովը ետ մղվեց, բացվեց ծովի հատակը, ջուրը երկու մասի բաժանվեց: Իսրաելցիները մտան հատակը բացված ծովի մեջ ու առաջ գնացին, ինչպես ցամաքով»:⁸

Մինչդեռ Գոյթիսոլոյի վեպում հնազանդ մանուկները, հազարներով «մտնելով ծովը», խեղդվեցին, կամ մատնվեցին ստրկության:⁹

«Թախիծ դրախտում» վեպում ևս երեխաները դառնում են անմիտ մեծահասակների հրահրած պատերազմի զոհերը: Դորայի մահից հետո հսկողությունից դուրս եկած մանկատան սաները, նմանակելով մեծահասակներին, սպանում են իրենց ընկերոջը՝ Աբելին, և ուզում են ողջ-ողջ այրել իրենց ուսուցիչ Կինտանային, որի կյանքը վերջին պահին փրկում են վրա հասած ֆալանգիստ զինվորները: (107-109) Ավելի ուշ՝ մտորելով կատարվածի մասին, Կինտանան իրեն փրկած զինվոր Սանթոսին ասում է. «Ոչ ոք մեղավոր չէ: Այս որբերից գողացել են մանկությունը: Նրանք ըստ էության, երբեք երեխաներ չեն էլ եղել»: (28, 110)

Գոյթիսոլոյի մանուկ հերոսները՝ արդյունք են իրականության երկակի ընկալման. առաջին հայացքից թվում է, թե նրանք դահիճներ են, բայց իրականում նրանք զոհեր են՝ իրենց ժամանակի ու իրականության զոհերը:

⁷ Juan Goytisolo. Duelo en el paraíso, Barcelona, 1960, p.169-170

⁸ Հին կրակարան, էջ 14, 21-22

⁹ Juan G. Juegos de manos, Barcelona, 1954, p.95-96

Ինչպե՞ս կարելի է մեղադրել երեխաներին, հեզնուն է Գոյթիսոլոն, եթե նրանք անուն են այն, ինչ ամեն օր իրենց խորհուրդ է տալիս Իսպանական ռադիոն։ «Մի կորցրեք ձեր գոգնությունը։ Ստեղծեք ձեր ուստիկանությունը, ի հայտ բերեք դավաճաններին, եթե ձեր մեջ կան ֆաշիստներ, մահապատժի ենթարկեք նրանց»։ (197)

Բուն պատերազմը «Թախիծ դրախտում» վեպում ներկայացված է մեծահասակ հերոս Մարտին Էլոսեգրիի շուրթերով։ Սահմանամերձ շրջանը պաշտպանող զինվորական ջոկատում տիրում է անարխիսիան ու քաոսը։

Վեպում Գոյթիսոլոն հավասարության նշան է դնում հակամարտող կողմերի միջև՝ ոչ ֆալանգիստները և ոչ էլ հանրապետականները, չունեն գաղափարներ, կամ կոնկրետ նպատակներ, ընդամենը կամա թե ակամա, ընկել են պատերազմի հորձանութի մեջ, ու չեն գտնում ելքը, կամ, ինչպես ֆրանկիստական բանակի լեյտենանտ Ֆենոսան, երազում են պատերազմի օգնությամբ հերոսանալ։

Գոյթիսոլոյի զինվորներից յուրաքանչյուրը փորձում է իր համար պարզել, թե ինչո՞ւ է ինքը հայտնվել ռազմաճակատում, ինչո՞ւ է սպանում իր հայրենակիցներին, բայց այդպես էլ չի գտնում իրեն հուզող հարցերի պատասխանը։ Պատերազմը այստեղ ներկայացնում է որպես մարդկանց կույր ատելության դրսևորում, ճիշտ այնպես, ինչպես Աստվածաշնչում Կայենի կողմից Աբելի սպանությունը։

Ավելի ուշ գրված «Չատուկ նշաններ» (1966) վեպում Խուան Գոյթիսոլոն պատերազմի ողջ մեղքը բարդում է ֆալանգիստ ազգայնականների վրա։ Նրանք այստեղ ներկայանում են որպես «սատանայի դեսպանորդներ» ու «չարի արարողներ»։¹⁰

Այս նույն ժամանակ, իր հարցազրույցներից մեկում՝ խոսելով ֆրանկիստական ռեժիմի մասին, Գոյթիսոլոն ասում է. «Ժողովուրդը, որը երեսուն տարի ապրել է նման ռեժիմի իշխանության ներքո՝ հիվանդ ժողովուրդ է և պետք է աղտորոշել նրա բոլոր հիվանդությունները»։¹¹

Ըստ էության Խուան Գոյթիսոլոյի ստեղծագործությունները նման «ախտորոշման» փորձեր են, որոնցում գրողը ձգտում է վեր հանել իսպանական բոլոր «հիվանդությունները», որոնք «բուժման» կարիք ունենին։ Եվ այն փաստում, որ ներկայիս Իսպանիան ընտրել է ժողովրդավարության ուղին, իր մեծ ներդրումն ունի մաս մեծանուն գրողը։

¹⁰ Juan Goytisolo. Senas de identidad. Mexico, 1966, p.29

¹¹ J.G. Destruccion de la Espana sagrada, - Mundo nueva, Paris, 1967, junio, p.56